ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- փետրվարի 2023 թվականի №---Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նախագահի 2022 թվականի հուլիսի 6-ի №441-ՀՆ հրամանի հիման վրա, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման գործընթացի՝ Հանձնաժողովի իրավական ակտերին համապատասխանության ստուգման, ինչպես նաև Հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և տեղեկատվության հավաստիության գնահատման նպատակով 2022 թվականի հուլիսի 11-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ 73 դեպքերում չեն պահպանվել Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված՝ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ Կանոններ) սահմանված պահանջները և ժամկետները,
2) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2022 թվականի հոկտեմբերի 12-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոններով սահմանված պահանջների հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը

ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի №ՍԱ/34.3-Մ2-11/3571-2022 գրությամբ,

3) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2022 թվականի նոյեմբերի 2-ի №02/29/3337-2022 գրությամբ, հղում կատարելով իր կողմից դեռևս 2022 թվականի օգոստոսի 19-ի №05/29/2511-2022 գրությամբ ներկայացված պարզաբանումներին, ըստ էության հայտնել է, որ Կանոններով սահմանված ժամկետների չպահպանումը պայմանավորված է դիմող անձանց սպառման համակարգերի շինարարությունը չավարտելով, գազասարքավորումների բացակայությամբ, նախահաշվով սահմանված վճարի 20 տոկոսի վճարումը չկատարելով, տեղական ինքնակառավարման մարմինների գործողություններով, դիմող անձանց կողմից դիմումներից հրաժարվելով և մրցույթների կազմակերպմամբ,

4) Ընկերությունը 2023 թվականի հունվարի 12-ի №02/29/100-2023 գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում ուսումնասիրվել են 272 դիմումներ, որոնցից հայտնաբերվել է գազիֆիկացման ժամկետների խախտման 9 դեպք, որոնք հիմնականում պայմանավորված են այլ մատակարար կազմակերպությունների կողմից նախագծերի համաձայնեցումների համար պահանջվող որոշակի անխուսափելի ժամանակատարությամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի №596-Ն որոշման համաձայն՝ նշված գործընթացները ենթակա են պարտադիր կատարման, հակառակ դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ուղղակի կմերժվեն գործառույթների իրականացումներն, ու չեն տրամադրվի համապատասխան շինարարության թույլտվություններ: Միևնույն ժամանակ, ընտրանքային կարգով ուսումնասիրված թվով 40 գազիֆիկացման դեպքերից միայն հինգում են հայտնաբերվել Կանոնների 11.4-րդ կետով սահմանված ժամկետների շեղումներ, և Ընկերությունը պատրաստակամություն է հայտնել ուսումնասիրել 2021 թվականի ընթացքում նման բոլոր դեպքերը, արձանագրված խախտումների դեպքում կատարել վերահաշվարկ և Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն,

5) վարչական վարույթի շրջանակում քննվող գործի օբյեկտիվ, բազմակողմանի և լրիվ քննության ապահովման նպատակով և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը և 29-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը 2023 թվականի հունվարի 13-ի №15-Ա որոշմամբ մեկ ամսով երկարաձգել է հարուցված վարչական վարույթի ժամկետը,

6) Ընկերությունը 2023 թվականի փետրվարի 2-ի №05/29/370-2023 գրությամբ հայտնել է, որ իրենց կողմից իրականացված վերլուծության արդյունքում վեր են հանվել 30 դեպքեր, երբ Կանոնների 11.4-րդ կետով նախատեսված միացման վճարի մարումները սկսել են իրականացվել գազամատակարման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումից որոշակի ժամանակ հետո, և բոլոր դեպքերում Ընկերությունն իրականացրել է վերահաշվարկ, ու մարման ենթակա գումարները սույն թվականի մարտ ամսին կներառվեն սպառողների կողմից փետրվար ամսվա համար վճարվելիք հաշվարկային փաստաթղթերում՝ որպես կանխավճար: Ինչ վերաբերում է մատակարար կազմակերպությունների կողմից նախագծերի համաձայնեցմանը, ապա Ընկերությունը հայտնել է, որ այդ ժամկետները օրենսդրությամբ սահմանված չեն, իսկ համաձայնեցման ներկայացման և դրա ստացման ժամկետները չեն փաստաթղթավորվում, ինչը խնդիրներ է ստեղծում դրա նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու համար, սակայն գործընթացի ժամանակատարությունը տեսանելի է Հանձնաժողով ներկայացված համաձայնեցման թերթիկներում առկա ստորագրությունների ամսաթվերն ուսումնասիրելիս,

7) Կանոնների 10.10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նոր գազասպառման համակարգի՝ գազամատակարարման ցանցին միացման պայմանագիրը և միացման համար անհրաժեշտ աշխատանքներին համարժեք վճարի 80 տոկոսի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը Կանոնների 10.7-րդ կետի համաձայն մատակարարին ներկայացման օրվանից մինչև դիմող անձին գազամատակարարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու

առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 30 աշխատանքային օրը,

8) Կանոնների 11.4-րդ կետի համաձայն՝ նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացնելու համար դիմող անձի կողմից վճարվող վճարը գազամատակարարման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման օրվանից հետո, մինչև նրա ամբողջական մարումը, յուրաքանչյուր ամիս նվազեցվում է բացառապես տվյալ սպառման կետում բաժանորդին մատակարարված բնական գազի արժեքից՝ բաժանորդի կողմից տվյալ ամսում սպառված բնական գազի արժեքի (առանց ԱԱՀ-ի) հինգ տոկոսի չափով,

9) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 10.10-րդ կետի 1-ին ենթակետի և 11.4-րդ կետի պահանջները. մասնավորապես, ինը դեպքում դիմող անձանց գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացվել են ժամկետի խախտմամբ, իսկ 30 դեպքում Կանոնների 11.4-րդ կետում նշված վճարի նվազեցումը սկսել է իրականցվել գազամատակարարման ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումից որոշակի ժամանակ հետո: Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացրած պարզաբանումներին, ապա դրանք չեն կարող նշված խախտումների համար Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու հիմք հանդիսանալ,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը ու «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 10.10-րդ և 11.4-րդ կետերի պահանջների խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2023թ.